

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/8

29 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ 31.08.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը եկամտային հարկի գծով հաշվարկված տույժը վերանայելու վերաբերյալ:

«Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ գանգատում բերված փաստարկները.

2014 թվականի օգոստոսի 12-ին թիվ 57 վճարման հանձնարարագրով «Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ն (այսուհետ նաև գրադարան) որպես 2014 թ-ի հուլիս ամսվա աշխատավարձի եկամտային հարկ պետական բյուջե է փոխանցել 808640 դրամ: Վճարման հանձնարարագրի «վճարման նշանակությունը տողում նշվել է «ԳՄԳ ի 2014 VII-րդ ամսվա աշխատավարձի 24,4% եկամտային հարկ»: Վճարման հանձնարարագիրը տպելու ժամանակ սխալմամբ գրվել է 900005000170 հաշվեհամարը, որը սոցիալական վճարների հաշվեհամարն է:

Աշխատավարձի եկամտային հարկի գումարը պետք է փոխանցվեր թիվ 900005600110 հաշվեհամարին: Տպագրական մեխանիկական սխալի պատճառով փոխանցված գումարը չի մուտքագրվել ըստ նշանակության, որի պատճառով Գավառի տարածքային հարկային տեսչությունը սկսած 2014 թվականի օգոստոսի 20-ից հաշվարկել է տույժ, որը 27.08.2015 թ-ի դրությամբ կազմել է 327.910 դրամ:

Թույլ տրված սխալը հայտնաբերելուց հետո 09.12.2014 թ-ին գրադարանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարին և Գավառի ՏՀՏ:

Գավառի ՏՀՏ-ի կողմից տեղեկացվել է, որ սոցիալական վճարի գերավճարի վերադարձման հարաբերությունները կարգավորող իրավական ակտ առկա չէ:

ՀՀ ֆինանսների նախարարի 04.02.2015թ. թիվ 46-Ն հրամանով կարգավորվել է սոցիալական վճարի գերավճարի վերադարձման կարգը:

Գրադարանը բազմիցս դիմել է Գավառի ՏՀՏ և խնդրել կարգավորել հարցը, միջնորդել կամ վերադարձնել գրադարանի հաշվին սխալ փոխանցված գումարը, կամ վերաձևակերպել որպես եկամտային հարկի գումար: Սակայն, հարցը լուծում չի ստացել նույնիսկ ՀՀ ֆինանսների նախարարի վերը նշված հրամանը ուժի մեջ մտնելուց հետո: Սխալ հաշվեհամարին փոխանցված գումարի հետ կապված պետական բյուջեն որևէ վնաս չի կրել:

«Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ը բյուջետային հիմնարկ է և ֆինանսավորվում է բացառապես պետական բյուջեից, որևէ լրացուցիչ եկամտի աղբյուր չունի, իսկ նախահաշվով հաստատված գումարը ծախսվում է նպատակային և որևէ շեղում չի թույլատրվում:

Վերոգրյալի հիման վրա գրադարանը խնդրում է եկամտային հարկի չկատարված հարկային պարտավորության նկատմամբ հաշվարկված տույժը համարել մեխանիկական սխալի արդյունք և զիջել այն:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ը 2014 թ-ի օգոստոսի 12-ին թիվ 57 վճարման հանձնարարագրով պետական բյուջե է փոխանցել 808640 դրամ, որպես 2014 թ-ի հուլիս ամսվա աշխատավարձի եկամտային հարկ: Վճարման հանձնարարագրի վճարման նպատակը տողում նշվել է 2014 թ-ի 7-րդ ամսվա աշխատավարձի եկամտային հարկ 24,4% դրույքաչափով: Սակայն, վճարման հանձնարարագիրը տպելու ընթացքում եկամտային հարկի թիվ 900005600110 հաշվեհամարը նշվելու փոխարեն սխալմամբ նշվել է թիվ 900005000170 հաշվեհամարը, որը սոցիալական վճարների հաշվեհամարն է:

Տեղի ունեցած մեխանիկական սխալի պատճառով փոխանցված գումարը չի մուտքագրվել ըստ նշանակության: Արդյունքում, Գավառի ՏՀՏ կողմից 2014 թ-ի օգոստոսի 20-ից եկամտային հարկի գծով հաշվարկվել են տույժեր:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ վերոգրյալ վճարման հանձնարարագրում համապատասխան հաշվեհամարը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է: Այսինքն, թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ և չի կարող հիմք հանդիսանալ լրացուցիչ պարտավորություններ հաշվարկելու համար:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ «Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից վճարման հանձնարարագրում թույլ տրված մեխանիկական սխալը, ըստ էության, չի կարող հիմք հանդիսանալ ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ հաշվարկման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

«Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ 31.08.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ